1888/89 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒԱՅ:

Աղիւտակ II:

ՎԻՃԱԿ	Դպրոցների ընդհանուր թիւը	Աշակերտների և աշակերտուհիների քանակը			Ուսուցիչ և վարժուհիները որանդ են սովորել							Տարեկան մուտք		Տարեկան ծախսք						
		Տղայաց	Օրիորդաց	Ընդամենը	Գ. Ճեմարան	Հոգևոր դպրոցներ	Պետական դպր.	Ուսուցչական դպրոց	Մասնաւոր անձանց մօտ	Ընդամենը	Րուբ.	Կոպ.	Ռոճիկ		Զանազան ծախսք		Գումար			
												Րուբ.	Կոպ.	Րուբ.	Կոպ.	Րուբ.	Կոպ.	Րուբ.	Կոպ.	
1888/89																				
ՏՓԽԻՍ . . .	56	2128	2009	4137	13	123	44	10	4	194	87183	65	62537	43	20709	83	83247	26	26	
ԵՐԵՎԱՆ . . .	57	3229	1215	4444	30	111	39	12	8	200	67585	52	47565	78	9814	94	57380	72	72	
ԱՐՑԱԽ . . .	20	806	266	1072	3	22	4	2	2	33	14310	54	11295	»	1385	56	12590	56	56	
ՇԱՄԱԽ . . .	14	484	247	731	3	18	6	3	2	32	19795	81	15237	48	3275	99	18513	47	47	
	147	6647	3737	10384	49	274	93	27	16	459	188875	52	136545	69	35186	32	171732	01	01	

յարմարութիւններով բնաւ չեն գանազանւում գիւղական հակառուոր-
ջապահական խրճիթից, կատարեալ բացակայութիւն ուսուցման գոր-
ծին անհրաժեշտ պարագանների՝ յարմար աշակերտական նստարան-
ների, իրազննական առարկաների, գիտողական ուսման անհրաժեշտ
պիտոյքների և այլն և այլն: Ահաւասիկ այս է մեր ներկայ գիւ-
ղական դպրոցների ընդհանուր դրութիւնը:

Եթէ մենք վերցնենք առանձին շրջաններ, կը տեսնենք, որ մեր
գիւղացի ազգաբնակչութեան մատաղ սերնդի կրթութեան գործը
շատ անմխիթար դրութեան մէջ է գտնվում: Ստորև առաջ ենք
բերում մի աղիւսակ, որից պարզ երևում է, թէ ո՞ր շրջանում քա-
նի հայկական գիւղ կայ և իւրաքանչիւր գիւղին քանի ծխական
դպրոց է ընկնում:

Աղիւսակ III:

№№ ըստ կար.	Շ Ր Ջ Ա Ն Ն Ե Ր	Քանի գիւղ շրջանում	Քանի չ. եկ. ծխ. դպրոց	Քանի գիւղ. մի. չ. եկ. ծխ. դպր.
1	Ախալքալաքի (Չաւախք)	87	1	87
2	Չարիշատի, Նախիջևանի և Կաղզուան.	21	2	10,5
3	Ջրաբերդ	52	6	8,6
4	Աբարան	25	3	8,3
5	Ղարսի գաւառ	22	3	7,3
6	Բասենի, Օլթիի և Արդահանի	22	3	67,3
7	Լօռուայ գաւառ	60	10	6
8	Աղէքսանդրապ. շրջան (Շիրակ)	125	26	4,9
9	Հին-Նախիջևանի վիճակ	100	21	4,8
10	Նուխու գաւառ	47	10	4,7
11	Ղարսի (Շիրակի) շրջան	25	6	4,2
12	Նոր-Բայազէդ (Գեղարքունիք)	33	9	3,7
13	» » Ծաղկաձոր	25	8	3,1
14	Դիզակ	41	13	3,1
15	Խաչէն	24	8	3
16	Վարանդա	62	25	2,5

Այս աղիւսակից պարզ երևում է, որ Չաւախքի շրջանը բոլորո-

վին գուրկ է եկ. ծխ. հայոց դպրոցներից. կրթական բաժնիս Բիւրօն պէտք է աշխատի միջոցներ հայթհայթել, որ հայ կրթական գործը այդ շրջանում առաջ տարուի:

Հայր Մատթէոս Մատթէոսեանը 1908 թ. ամառը ուղարկել էր մեզ մանրամասն վիճակագրական տեղեկութիւններ Աղէքսանդրապօլի փոխանորդութեան ազգաբնակչութեան կրթական վիճակի մասին: Աչքի առաջ ունենալով այդ շրջանի հայ ազգաբնակչութեան յետամնացութիւնը, նրա անծայր աղքատութիւնը և որ այդ շրջանում, Արագածի փիշերի վերայ ապրում են 125000—130000 հայեր Բիւրօն որոշեց յատկացնել 12 շինական կրթավայրերին նպաստ 3600 ռ. սա մի կաթիլ է ծովի մէջ, սակայն Բիւրօյիս միջոցները չէին ներում աւելին անել:

Հայր Խորէն Մուրադբէկեանը նմանապէս ուղարկել էր 1908 թ. տեղեկութիւններ Նոր-Բայազէդի փոխանորդութեան հայ ազգաբնակչութեան կրթական վիճակի մասին և միջնորդ հանդիսացել, որ օգնենք այդ շրջանում նոր դպրոցներ բանալու: Բիւրօս յատկացրեց հինգ դպրոցի նպաստ ամեն մէկին 300-ական ռուբլի:

Մասնաւորապէս Ղարսի շրջանը ընդհանրապէս կրթական գործում ամենայետամնացն է: Այդ շրջանը ոչ միայն անտես է առնուած Հոգևոր իշխանութեան կողմից, այլ և պետական դպրոցական վարչութեան անուշադրութեան չէ արժանացել: Բիւրօյիս անդամ պ. Զ. Զանբազեանցը 1908 թ. ամառը ներկայացրել է Ղարսի նահանգի կրթական վիճակի մասին տեղեկագիր, որը կազմելիս օգտուել է Ղարսի նահանգի պետական և ծխական դպրոցների մի խումբ ուսուցիչների և գիւղական շրջաններին լաւ ծանօթ անձերի տուած տեղեկութիւնների հիման վրայ: Ցուցակագրուած են բոլոր հայաբնակ գիւղերը: ¹⁾ Նահանգի կրթական վիճակի մասին ընդհանրապէս և հայաբնակ գիւղերի մասին մասնաւորապէս մի ամփոփ գաղափար կազմելու համար, տեղեկագրի մէջ առաջ է բերում պաշտօնական աղբիւրներից քաղուած հետևեալ տեղեկութիւնները:

Ամբողջ նահանգում կայ 812 բնակավայր (քաղաք, գիւղաքաղաք և գիւղ), որոնց բնակիչների ընդհանուր թիւն է 328,687 հոգի կրթական հիմնարկութիւններն են ²⁾ ա) միջնակարգ—2 (1 Ռեալա-

1) Обзоръ Карсской обл. за 1906 г. 2) Памятная книжка и адресн. календарь Карсской обл. за 1908 г. 3) Списокъ насел. за 1904 г.

2) Չհաշուած տաճկական մետրեսէները:

կան դպր. և 1 օրիորդաց գիմնազիա), բ) ստորին կարգի—130 (այս հաշվում 3 քաղաք. և 1 օրիորդ. Մարիամեան դպրոց). դպրոցների ընդհանուր թիւն է 132, որոնցում սովորում են 3325 աշակերտ-աշակերտուհի, որ կազմում է ազգաբնակչութեան ընդհանուր թուի 1⁰/₁₀-ը:

Ձուտ կամ խառն հայաբնակ վայրերի թիւը 97,
 որոնցից քաղաք, գիւղաքաղաք—5, հայ ազգաբնակչութիւն 29,000,
 » » գիւղեր 92, » » » 66,918,
 Ընդամենը 97, բնակչութիւն 93,918

Կրթական հիմնարկութիւնների բաշխումն՝

ա) քաղաք և գիւղաքաղաք.

1) Ղարս	6	պետական	2	ծխական	1	մասնաւոր
2) Կազգուան	3	»	1	»	»	»
3) Մարիզամիշ	1	»	1	»	»	»
4) Օլթի	1	»	1	»	»	»
5) Արդուին	2	»	1	»	»	»
Ընդամենը	13	»	6	»	1	»

Այսպիսով ուրեմն Ղարսի և Նահանգի չորս գիւղաքաղաքների հայ ազգաբնակչութիւնը՝ թուով 29000 հոգի իրանց կրթական պահանջներին բաւարարութիւն տալու համար պիտի դիմեն վերայիշուած կրթական հաստատութիւններին:

բ) գիւղեր

1) Շիրակի շրջան	25	գիւղ	2	պետ. դպ.	3	ծխ.
2) Ղարսի »	6	»	1	»	1	»
3) Թախաի »	16	»	2	»	1	»
4) Ջարիաշաի »	8	»	1	»	—	»
5) Նախիջևանի	9	»	4	»	1	»
6) Կազգուանի	6	»	—	»	—	»
7) Բասենի »	12	»	2	»	—	»
8) Օլթիի »	8	»	2	»	—	»
9) Արդահանի »	2	»	1	»	—	»

Ընդամենը 92 գիւղ 15 պետ. դպ. 6 ծխ. դպ.

Գիւղական այս 21 դպրոցներում սովորողների ընդհանուր թիւն է 1,153 հոգի, ուրեմն 64,918 բնակչից միմիայն 1,7⁰/₁₀ է սովորում:

Առաջ բերուած թուական տեղեկութիւնները բաւական պարզում են, թէ Ղարսի շրջանի ազգաբնակչութիւնը կրթական խընդրում ինչ աննախանձելի վիճակում է գտնուում: Կրթական Մաս.

հաճիւղը 1908 ուսումնական տարում շնորհիւ մեծ. պ. Ա. Մանթաշեանի դրամական նուիրաբերութեան, Ղարսի շրջանում չորս տարրական դպրոց է բացել (տես տեղեկ. I և II) բաւական դժուարութիւնների հանդիպելով շնորհիւ ժողովրդի յետամնացութեան: Եթէ վերջ-ի-վերջոյ յաջողուեց այս շրջանում այդ չորս դպրոցը բանալ, այդ միայն դարսաբնակ հայ երիտասարդների շնորհիւ, որոնք պ. Զանբազեանի ղեկավարութեամբ, ջերմ աջակցութիւն ցոյց տուին այդ դպրոցների բացումը յաջողուելուն:

Որպէս-զի մօտաւոր գաղափար կազմենք հայերիս ժողովրդական լուսաւորութեան մասին ընդհանրապէս Անդրկովկասում, տեսնենք ի՞նչ վիճակի մէջ է հայերիս կրթական գործը պետական դպրոցներում 1908 և 1909 թ. ¹⁾

Որովհետև կովկասի ուսումնարանական շրջանի պ, հոգաբարձուի տեղեկագրի մէջ առ 1-ն Յունւարի 1909 թ. հայոց ծխական դպրոցների աշակերտների թուի մասին ամփոփ թւական տեղեկութիւններ չկան, այդ աղիւսակը մենք կը լրացնենք վերոյիշեալ մեր առաջ բերած տեղեկութիւններով, այսինքն, որ հայոց ծխական դպրոցներում սովորող աշակերտների թիւը 28.819 հոգի է եղել 1908/9 այն ժամանակ մենք հետևեալ համեմատական աղիւսակը կը ստանանք 1908 և 1909 թուականի Անդրկովկասի հայ ազգաբնակչութեան կրթական վիճակի մասին:

Աղիւսակ IV:

Տարի	Հայ ազգաբնակչութիւնը:	Դպրոցական հասակի երեխաներ	Սովորողների ընդհանուր թիւը							
			Միջնակարգ կըրթութիւն	Ստոր-կարգի կըրթութիւն	Մասնագիտական	Արդիւնաբերական	Տարրական պետակ. դպր.	Ընդհանուր թիւ պետ. դպր.	Տարրական չ. եկ. ձխ. դպր.ը	Ընդհանուր թիւ:
1908 թ.	1,350,000	114000 (8 ¹ / ₂ %) 108000 (80%)	8461	2865	45	754	16743	28868	22268	51136
1909 թ.	1,390,000	111,200 (8 ⁰ / ₀)	7834	2886	40	1006	17718	29484	28819	58303

¹⁾ Отчетъ о состояніи уч. завед. Кавказ. учебн. округа за 1907 и 1908 г.

Այս աղիւսակի թուերը ցոյց են տալիս, որ Անդրկովկասի հայ ազգաբնակչութեան դպրոցական հասակ ունեցող 108,000 երեխաներից 1908 թ. սովորելիս են եղել 51.136 հոգի, որ ասել է 47⁰/₀, իսկ ազգաբնակչութեան թուի համեմատութեամբ 3.80⁰/₀ 1909 թ. 52⁰/₀, կամ ազգաբնակչութեան 4,2⁰/₀:

Կովկասի ուսումնարանական շրջանի պ. հոգաբարձուն դպրոցական հասակի երեխաների թիւը հաշոււմ է ազգաբնակչութեան միայն 8⁰/₀, որը մեր կարծիքով քիչ է: Գուցէ այդ բացատրոււմ է այն հանգամանքով, որ մեզանում տարրական կրթութեան ժամանակամիջոցը միջին թւով հաշոււմ է 3—4 տարի, մինչդեռ Եւրոպայում 6—8 տարի է տևում, այդ պատճառով էլ այն տեղ դպրոցական հասակի երեխաների թիւը հաշոււմ են ազգաբնակչութեան ընդհանուր թուի 15⁰/₀: Ակադեմիկ Բունակովսկին դպրոցական հասակ ունեցող երեխաների թիւը հաշոււմ է ազգաբնակչութեան 10⁰/₀:

Առաջ բերուած աղիւսակից երևում է, որ 1909 թ. պետական դպրոցներում սովորող հայ աշակերտների թիւը աւելացել է 616 հոգ. մինչդեռ մեր ծխական դպրոցներում աշակերտների թւի աճումը հասնում է 5551 հոգու: Այս հանգամանքը թերևս բացատրուի նրանով, որ թէ Կուլտուրական Միութիւնը, թէ Կ. Հ. Բար. Ընկեր. և թէ զանազան հիմնարկութիւններ առանձին թափով աշխատել են նպաստել զաւաններում գիւղական տարրական դպրոցների ցանցը ընդարձակելու:

Մեր այս տեղեկագրին կցած III բաժնից (Կովկասի հայոց եկեղեցական ծխական դպրոցների ցանկից) երևում է, թէ Կուլտուրական Միութիւնը, Կ. Հ. Բար. ընկ. և թէ միւս հիմնարկութիւնները* մօտ որքան դրամական նպաստ են տուել գիւղական դպրոցներին:

Կուլտուրական Միութեան դպրոցական մասնաճիւղը մի կողմից աշխատել է ժողովրդի գիտակցութեան մէջ վառ պահել սէր դէպի դպրոցը, միւս կողմից ժողովրդի զանազան խաւերը կապելով դպրոցական գործի հետ՝ ձգտել է հետաքրքրել նոցա դպրոցական կեանքով, սովորեցրել է հետզհետէ դպրոցների կարիքները հոգալու իւր սեպհական միջոցներով և խնամելու հայկական զաւանական խաւար միջավայրում վառուած այդ լուսոյ ճրագը:

Մեր ժողովրդի առաջադիմութեան գործը բաւական աննպաստ և բարդ պատճառներից կախումն ունի: Մեր հոգևոր իշխանութիւ-

* Հիմնարկութիւնների և մասնաւոր անձանց նպաստ. մասին մեր տեղեկութիւնները լիւ էին:

նր, որի անմիջական պարտականութիւնն է հոգ տանել իւր հօտի մտաւօր և բարոյական դաստիարակութեան վրայ, բնաւ տրամադրութիւն չի ցոյց տալիս մեր կրթական գործը բարեկարգելու, որոշ կարգ ու կանոնի ենթարկելու, մեր ժողովրդի անծայր ազիտութիւնը, հայ ինտիլլիգենցիայի քար անտարբերութիւնը իրար լրացնում են և մեր ժողովրդի առանց այն էլ աննախանձելի դրութիւնը ևս առաւել վատթար վիճակի մատնում: Այս պարտգաներում: ինչ ասել կուզի, դանազան բարենպատակ հիմնարկութիւնների վրայ է ընկնում կրթական գործի բարելաւման նախաձեռնող հանդիսանալ և ամեն ջանք գործ դնել դպրոցական գործը առաջ տանել: Կովկասեան ուսումնասիրանական շրջանի պարսն հոգաբարձուն իւր տեղեկագրով ուշադրաւ տեղեկութիւններ է տալիս մեզ: Այդ տեղեկութիւններից երևում է, որ Կովկասի դպրոցներում հայ աշակերտների թիւը չի աճում, եթէ համեմատութեան առնենք 1898—1908 թ. տասնամեայ շրջանը: Մեր առաձները ակներև դարձնելու համար առաջ բերենք այդ աղիւսակը, որից իւրաքանչիւրը կարող է եզրակացութիւն անել:

Աղիւսակ V:

Ազգութիւն	Բնակչութիւն (հազար)		Սովորողների թիւը		Սովորողների թիւը ըստ ազգաբնակչ. 0/0		Սովորողների բնութ. հասակի երիտասերի 0/0 0/0	
	1898	1908	1898	1908	1898	1908	1898	1908
Ռուսներ	3101	3720	70431	170113	2,2	4,6	28	58
Վրացիներ	1514	1820	26243	46221	1,7	2,5	21,6	31,7
Հայեր	1190	1430	24298	31164	2,1	2,2	25,5	27,2
Թուրքեր	1750	2100	4619	119786	0,3	0,5	3,3	7
Հեռնեցիներ	1351	1620	3949	7469	0,3	0,5	3,7	5,8
Ուրիշ ազգեր	500	700	10228	18639	1,8	2,6	22	33,3

Այս աղիւսակում թուերը պարզ ցոյց են տալիս, որ այն ժամանակ, երբ մեր դրացի ազգերի աշակերտութեան թիւը տարեց տարի աճում է, ընդհակառակը հայ աշակերտութեան թիւը համար-

եայ թէ նոյնն է մնացել: Պետական դպրոցներում հայ աշակերտութեան թուի նուազումը թերևս այլ պատճառներով կարելի լինի բացատրել, որովհետև չի կարելի ասել, որ հայ ժողովուրդը իւր դրացի ազգերի համեմատութեամբ ուսումնասէր չէ, որ հայը չի ձգտում իւր գաւակներին պետական դպրոցներում կրթութիւն տալու: Եթէ համեմատութեան առնելու լինենք հայ ժողովրդի կրթական գործի վրայ կատարած ծախքը առաւել քաղաքակիրթ ազգերի հետ, կը տեսնենք, որ հայ ժողովրդի նիւթական գոհաբերութիւնը, որը իւրաքանչիւր շնչին 35 կոպ. է հասնում, շատ աննշան է: Ստորև առաջ բերուած թւերը թող մեզ համար ուղեցոյց լինին: Այդ թուերը ցոյցեն տալիս, թէ՞ եւրոպական զանազան ազգութիւնների մէջ տարրական կրթութեան վրայ կատարած ծախքը ամեն մի շնչի սրբան է ընկնում ¹⁾:

Նոր-Ձէլանդիայում	5 ր. — 74
Միացեալ Նահանգներում	4 ,, — 86
Գերմանիայում	3 ,, — 43
Շվեյցարիայում	2 ,, — 43
Անգլիայում	2 ,, — 36
Ֆրանսիայում	1 ,, — 66
Իտալիայում	1 ,, — 52
Իտալիայում	— 76
Եապոնիայում	— 54
Ռուսաստանում	— 31

Ռուսաստանում ժողովրդական լուսաւորութեան գործը զանգաղ յառաջագիւժում է, լուսաւորութեան նախարարութեան բիւջէն տարէցտարի աւելանում է, այսպէս, ամեն մի շնչի վերայ ծախս է ընկնում՝ 1908 թ. 35,36 կ. իսկ 1909 թ. 42, 62 կոպ.: Միանգամայն պարզ է, որ նիւթապէս որչափ նպաստաւոր պայմանների մէջ լինի դրուած կրթական գործը, այնքան էլ նորա գործունէութիւնն արդիւնաւէտ կը լինի և հետևանքը արգասաւոր:

Հայոց եկեղեցական ծխական 332 դպրոցներից 278 գտնւում են գիւղերում, որոնք միանգամայն գուրկ են ամենատարրական յարմարութիւններից, իսկ այգալիսի դպրոցներում աշխատող ուսուցիչների կեանքը մի կատարեալ մարտիրոսութիւն է: Հարկաւ,

¹⁾ Экономическая Россія Озерова.

եթէ հայ ժողովրդը աւելի նիւթական գոհաբերութիւն անելով, միջոց և հնարաւորութիւն տայ դպրոցները իրանց կոչման համապատասխան բարձրութեան վրայ գնելու, այն ժամանակ դպրոցը կարող կը լինի իւր դերը կատարելու: Իրերի այս աննախանձելի դրութիւնն ի նկատի առնելով, Միութեան Կրթական Մասնաճիւղը ջանք չխնայեց միջոցներ ձեռնարկել գաւառական վայրերում կրթական գործը բարելաւման նպատակով: Նախաձեռնող հանդիսացան խաւարի մէջ խարխափող գիւղերում դպրոցներ հաստատելու գործին, որոշ տրամադրութիւն առաջ բերեց գաւառում դպրոցական խնդրով զբաղուելու որին յաջորդեցին կարճ ժամանակի ընթացքում հարիւրաւոր դիմումներ գիւղացիներէ կողմից՝ դպրոցներ բանալ և կամ, նպատակ գոյութիւն ունեցող դպրոցներին իրանց գործունէութիւնը շարունակելու: Դիմումներէ այս ուժեղ հոսանքի սկզբում Կրթական Մասնաճիւղը մի բոպէ իրան անգոր էր զգում առաջադրուած պահանջներին բաւարարութիւն տալու ցանկութեան, սակայն վստահ լինելով հայ ժողովրդի գիտակից տարրի աջակցութեան վրայ՝ որոշեց ընդառաջ գնալ ուսումնաձարաւ ժողովրդի կրթական պահանջին և միջոցներ ձեռք առնել բաւարարութիւն տալու: Մի կողմից քննութեան առնելով ստացուած խնդրագրերը, աշխատում էր հնարաւորութեան սահմաններում բաւարարութիւն տալ նրանց, միւս կողմից դիմումներ էր անում գանազան անձանց և հաստատութիւններէ, խնդրելով օգնութեան հասնել հայ ժողովրդի կրթական պահանջներին:

Դպրոցների նիւթականը հայթհայթելու գործում մեծ ծառայութիւն է մատուցել Միութեանս գլխաւոր խորհրդի նախագահ՝ պարոն Կ. Յ. Սատիսեանը: Նա անձամբ շատերի համաձայնութիւնն է ստացել դրամական օժանդակութիւն հասցնելու գաւառական դպրոցներին, իսկ հայր-Մատթէոս վարդապետի ընկերակցութեամբ նա թարգման հանդիսացաւ Ս. Պետերբուրգի եկեղեցական խորհրդի առաջ, բացատրելով Միութեան Կրթական Մասնաճիւղի նպատակը ու գործալակերպը և Մեծայարգոյ խորհուրդը տարեկան 8000 ռ. յատկացրեց շինական կրթավայրերի համար:

Այդ խոշոր նուիրաբերութիւնը մեծ զարկ տուեց բաժնիս գործունէութեան և դորա շնորհիւ քսան և երկու դպրոց կարողացան պահպանել իրանց գոյութիւնը: Նշանակալից է բաժնիս համար Ս. Պետերբուրգի եկեղ. խորհրդի որոշումը և այն տեսակէ-

տից, որ մասնանիշ անելով նպաստների բաշխման գլխաւոր շրջանները, գումարի և տեղի հարցը թողել է բաժնիս տրամադրութեան, մինչդեռ բազուարնակ նուիրատուները տարեկան 200 ռ. նպաստ խոստանալով պայման էին դնում դպրոց բանալ իրենց ծննդավայրում:

Այս հանգամանքը սահմանափակելով Մասնաճիւղիս գործունէութեան շրջանակը, հնարաւորութիւն չէր տալիս նպաստները յատկացնել այնպիսի վայրերի, որոնք կրթական գործում ամենայնաւնայն էն: Ս.-Պետերբուրգի եկեղ. խորհրդը հնարաւորութիւն տուեց Բիւրօյիս նպաստի մեծագոյն մասը յատկացնել Երևանի Թեմի հայ ազգաբնակչութեան դպրոցական գործին:

Սոյն տեղեկագրի II տախտակում յիշուած են թէ նուիրատուների գումարները որ դպրոցներին է յատկացրուած:

Գումարներ են խոստացել շինական կրթավայրի համար հետևեալ անձնաւորութիւնները և հաստատութիւնները.

1	Ս.-Պետերբուր. եկ. խորհուրդ	8000
2	Ա. Յ. Մանթաշեան	2000
3	Գ. Յ. Տէր-Մարգարեան	1500
4	Պ. Յ. Ղուկասեան	1000
5	Մ. Յ. Արամեանց	900
6	Տիկ. Մ. Աբեանց	300
7	Թիֆլիսի Նաւթարդիւն. Ընկ.	300
8	Բ. Յ. Յակովբեան	210
9	Մ. Մ. Սարուխանեանց	200
10	Գ. Թ. Ճգնաւորեանց	200
11	Ռ. Սարգսեան	200
12	Ա. Մ. Դաստակեանց	100
13	Ա. Բ. Աորիբէկեանց	1500
14	Պ. Մ. Ծատուրեանց	400
15	Ա. Յ. Պարոնեանց	200
16	Ս. Յ. Ադամեանց	250
17	Բժ. Ե. Վարդապետեան	225
18	Բժ. Վ. Մ. Արծրունի	300
19	Ս. Ս. Թաղիանոսեան	200
20	Մ. Ս. Սահարբէկեան	300

21	Գ. Յ. Կոստանեանց	200
22	Խ. Մ. Չիթողցեան	200
23	Վ. Պաստակեան	200
24	Յ. Տ. Յակոբեան	200
25	Շիխովօ Լնկեր	200
26	Իշխ. Բ. Երկայնաբ.-Արդութեան	200
27	Յ. Պ. Տէր-Մարկոսեան	200
28	Ս. Թ. Ամիրեան	200
29	Եղբ. Մութաֆեան	200
30	Բժ. Ս. Բ. Տէր-Միքայէլեան	200
31	Իստ. Թ. Տէր-Յովսէփեան	300
32	Եղբ. Տէր-Յովհաննէսեան	200

Մեծապատիւ պ. Գ. Տէր Մարգարեանն է միայն դպրոցի ամբողջ ծախքը հոգում, յատկացնելով տարեկան 1500 ռուբ.: Այդ դպրոցի համար բաւական մեծ և յարմարաւոր շէնք կառուցել է ինքը պ. Գ. Տէր Մարգարեանցը իւր սեպհական միջոցներով, որը իւր յարմարութիւններով ամբողջ շրջանում միակը կարելի է համարել:

Կրթական Մասնաճիւղը ցանկանում է այս դպրոցը Ղափանի շրջանի համար կենտրոնական դպրոցի վերածել գիւղատնտեսական բաժնով: Նոյն նպատակով Բիւրօն յատկացրել է Հառիճայի վանական դպրոցին 1200 ռ. (700 ռ., Պետ. եկ. խորհ. 300 ռ., Մ. Սահարբէգեանից և 200 ռ. Գ. Կոստանեանից): Այդ դպրոցը Շիրակի գիւղական դպրոցներից ամենայարմարագոյնն է իր հոյակապ դպրոցական շէնքով, ուսուցիչների համար յարմար բնակարաններով, դասական պիտոյքներով, իրազննական պարագաներով և այլն: Դպրոցին կից գիւղատնտեսական բաժին հիմնելու համար վանքը ունի յարմարութիւններ սեպհական արօտատեղի, պարտէզ, դոմ և այլն: Գիւղատնտեսական բաժին բանալու համար Բիւրօն բանակցութիւն էր սկսել Աղէքսանդրապօլի վիճակի նախկին փոխսնորդ Բարձրապատիւ Մատթէոս վարդապետի հետ, որը տեղում խորհրդակցութիւն կազմելով նպատակայարմար էր համարել դպրոցին կից կաթնասնտեսական բաժին բանալ: Հայր Մատթէոսը դիմել էր Բիւրօյիս, առաջարկելով որ ազարակի ծախքը կրթական մասնաճիւղը հոգայ: Բիւրօն քննութեան առնելով այդ հարցը, համաձայնուեց միայն դպրոցական մա-

սի ծախքը իր վրայ վերցնել, թողնելով անտեսական ծախքերը վանքին իւր միջոցներով հոգալու: Այդ հարցը մինչ օրս մնացել է անորոշ, թէև Բիւրօն իւր խոստացած գումարի հաշուին փոխադրել է 400 ռուբ.:

Կրթական Մասնաճիւղը ենթագրում է մեր ծխական միգատեան դպրոցների ցանցը հետզհետէ լայնացնելով, դրանցից դանազան շրջանների համար յարմարագոյնը կենտրոնական երկդասեան դպրոց դարձնել, գիւղատնտեսական մի որևէ բաժնով (մեղուարծութիւն, թռչնապահութիւն, կաթնատնտեսութիւն և այլն): Կենտրոնական դպրոցները բարեյաջող պայմանների մէջ դնելով՝ աշխատել նոցա որակը լաւացնելով օրինակելի դարձնել շրջանի մի դասեան դպրոցների համար: Կենտրոնական դպրոցները իրանց բարեկարգ վիճակով և յարմարութիւններով անտարակոյս առաւել ձեռնհաս և պատրաստուած ուսուցիչներ կը գրաւեն, որոնք իրանց գործունէութեամբ բարերար ազդեցութիւն կունենան թէ դպրոցի և թէ շրջապատի վրայ:

Մի այնպիսի կրթական հիմնարկութիւն, որպիսինը ներկայացնում է սոյն բաժինը՝ ներկայ միջնավայրում և ժամանակում՝ յայտնի է, որ լայն չափերովչէր կարող մի շարք ուսումնարանների վերաբերեալ ամբողջ կրթական գործի դէկը իր ձեռն առնել: Կամայ թէ ակամայ նա աշխատել է, մի կողմից — ինչքան կարելի է լայնացնել իր դպրոցների ցանցը, և միւս կողմից — օժանդակել ուսումնարաններին սրանց գոյութիւնը պահպանելու նպատակով, մինչև որ ժամանակով դպրոցը անհրաժեշտութիւն և սեփականութիւն կը դառնայ զի զի գիտակցող մասի համար:

Կրթական Բաժինը նպաստներ հաւաքելով՝ բնականօրէն նւիրատունների առաջ պարտաւոր է գգում իրեն որոշ չափով հետևելու ուսուցչական կազմին, անտեսական հարցերին, հոգաբարձուների և ուսուցիչների գործունէութեանը և առհասարակ մի շարք արտաքին խնդիրների, թողնելով ծրագրական հարցերը, ըստ պատկանելոյն — հոգևոր վարչութեան հսկողութեանը:

Թէ ի՞նչ է ներկայացնում մեր ուսումնարանական կեանքը Կովկասի չորս թեմում, նախնիքաց երեսների վկայութեամբ — միսթարական առանձին ոչինչ: Ուրեմն և մի խոշոր սպասելիք չի կարող լինել ընդհանուր օրէնքներին ենթարկւող և „մեր“ դպրոց-

ներում: Գիւղի դպրոցական կեանքի գործօնները ամեն տեղ նոյնն են— իր կոչման քարրորդ չափին չընամապատասխանող հոգաբարձութիւն, լքված, կրթական ձգտումներից դուրի ու գրագիտութեան նոյն իսկ արժէքը չ'ըմբռնող գիւղացիութիւն, ուսուցիչների բացակայութիւն,— եղածներն էլ մեծ մասամբ անբաւարար. վերջապէս շինարարական խիստ սենսաւատ պայմաններ ու անչափ սուղ միջոցների տէր ժողովուրդ . . . Ահա այն հողը, որի վրայ կրթական Բաժինը պատւաստում է կրթական գործը, ասելով— «պէտք է անել այն, ինչ որ հնար է անելու»:

Այդ ձգտումով կրթական Սեկցիան սկսելով իր գործունէութիւնը 1906 թ. աշնանը՝ 4 դպրոցով (չընաշւած Բագլայ Կանանց Արհես. Գար.) և յաջորդ տարին աւելացնելով 14 դպրոց ևս, հաշւետարում գրանց թիւը հասցնում է 64-ի*), յառաջագիւմելով 16 անգամ սկզբնական թւի վերաբերմամբ, բոլոր չորս թեմերում: Այդ դպրոցներից 38-ը բացված են կրթական Բաժնի նախաձեռնութեամբ, որ կազմում է «իր դպրոցներ» -ի թւի 59,40%: 64 շինական դպրոցներով կրթական Սեկցիան իր գործունէութեան վայրերում գիւղական բնակչութեան իւրաքանչիւր 1410 հոգուն տալիս է 1 դպրոց, և մասնաւորապէս— Ղարաբաղի թեմի 19 գիւղի իւրաքանչիւր 1000 հոգուն (154 ծխին), Շամախու թեմի 3 գիւղի իւրաքանչիւր 1200 հոգուն (201 ծխ.), Երևանի թեմի 32 գիւղի իւրաքանչիւր 1600 հոգ. (205 ծխին) և Թիֆլիզի թեմի 10 գիւղի 1775 հոգ. (290 ծխ.). մի դպրոց: Մի շարք թւեր, որ բնորոշում են կրթական Բաժնի գործունէութեան գլխաւոր միջավայրերը և որոշ չափով գանազան շրջանների հասարակութեան գէպի կրթական գործը ունեցած վերաբերմունքը:

Կրթական Բաժնի ջանքերը մարմնանում են ուսուցիչների ուսճիկները հայթհայթելու հարցում, և այդ խնդրում նա հասել է շոշափելի չափերի: Ղարաբաղի թեմում նա տալիս է «իր դպրոցների» ուսուցիչների ուսճիկների 64%օ, Երևանի թեմում— 55%օ, Թիֆլիզի թեմում 52%օ, Շամախու թեմում 83%օ և ընդհանուր առամբ— 58%օ, որ անում է կէսից աւելի: Պարզ է, որ առանց այդ ջգնութեան յիշեալ շինական 64 դպրոցները ոչ մի կերպ գոյու-

*) Յիշված թւերի մէջ չեն մտնում. 1) Կարմիր Աղբւրի դպրոցը, որին Սեկցիան միայն հաշւետարում տւել է 100 ռ. և 2) Վերին-Աքուլիսի դպրոցը, որը 2 տարի շարունակ ստացել է 200-ական ա. Սեկցիայի աջակցութեամբ.

Թիւն ունենալ չէին կարող: Ահա այն խոշոր պատճառը, որ այդ դպրոցների մասին խօսելիս՝ կրճատված՝ ասվում է--Բ. Հ. Կ. Մ. Կրթական Բաժնի դպրոցները:

Առհասարակ ամեն մի դպրոցի, ևս առաւել հայ շինական դպրոցի կեանքի և մահւան հարցը՝ ճակատագրօրէն՝ խիստ սերտ կապված է հայ ուսուցչութեան խնդրի հետ, ամենանեղ մտքով: Կրթական Բաժինը դառն փորձից գիտէ այդ. նա գիտէ, թէ ինչ հետևանքներ ու ինչ սիւրպրիզներ են սպասում մի կրթական հիմնարկութեան այդ հարցում: Այդ իմանալով և հաշիւ տակ դնելով իրարից կախումն ունեցող զանազան հանգամանքներ, — հակառակ տեղի ունեցող լուրջ կարծիքների, որ գոնարարի չափից գրեթէ կախումն չ'ունի գիւղական ուսուցչութեան կազմը, ուրեմն և նրա արժանաւորութեան չափը, հակառակ այն ենթադրութեան թէ կը տար գուր 300 թէ 500 ուսարեկան ոտճիկ հայ ուսուցչին, միևնոյն է դրանով ուսուցչութիւնը չի փոխվի, — այո, հակառակ այդ կարծիքի, լաւատեսութեամբ, Կրթական Բաժինը աշխատել է, ուր հնարաւոր է եղել, բարձրացնել ուսուցչի գոնորարը, տեղ-տեղ հասցնելով նրան 5—6 հարիւր ուրբու: Միջին թւով տարեկան՝ Սեկցիան իր ուսուցիչներին տւել է — Շուշուայ թեմում 429 ու, Երևանի թ. 345 ու, Թիֆլիզի թ. 310 ու. և Շամախու թ. 380 ու: Վարժուհիներին մօտ 300-ական: Չի կարելի ասել, որ սա ցանկալի max-ն է, բայց դա այն max-ն է, որից բարձրանալու հնար չի ունեցել Սեկցիան: Տարաբաղդաբար, կարծես թէ ի հաստատումն վերոյիշեալ հակառակ մտածողների կարծիքի, պարզվել է, որ ինչպէս շատ ստացողը, նոյալէս և քիչ ստացողը անբաւարար են եղել: Անբաւարար են եղել թէ ինչպէս ուսուցիչ և թէ՛ մանաւանդ՝ իբրև գիւղի՝ ուսուցիչ:

Կրթական Բաժինը իր 64 գիւղական ուսումնարաններում ունեցել է 86 ուս. և 7 վարժուհի, ընդամենը 93 հոգի: Գաստատուներից իւրաքանչիւրին ընկել է միջին թւով 42 աշակ. և միմիայն 13 ուսումնարանների 13 ուսուցչին մի-մի բաժանմունք: Մնացած 80 ուսուցիչ-վարժուհուն ընկել է 142 բաժ.: Բացի դրանից՝ մի-մի ուսուցիչ ունեցող ուսումնարանների թիւը հասնում է 45-ի, կազմելով բոլոր 64 դպրոցի $70\frac{0}{100}$, ուր սովորում են 21-ից սկսած մինչև 93 հոգի (մի ուսուցչին՝ 93 հոգի!), և մեծ մասամբ 50 և

Թ Ե Մ	Վտույց	Ծուխ	Բնակիչ	Կրթական դասի օժանդակություն	Ֆիրմա-հաս- թիվներ	Թանգարանային մասեր	Պահպանման արժեքներ	Շրջանային մուտքեր	Պատկեր դրամներ	Ստանդարտ մուտքեր	Պատկեր դրամներ	Ստանդարտ մուտքեր	Պատկեր դրամներ	Ստանդարտ մուտքեր	Պատկեր դրամներ	Ստանդարտ մուտքեր	Պատկեր դրամներ	Ստանդարտ մուտքեր	Պատկեր դրամներ	Ստանդարտ մուտքեր	Պատկեր դրամներ	Ստանդարտ մուտքեր			
ՂԱՐԱՐԱՆԻ	19	2931	19160	5730	4972	10702	11097	813	284	1097	20	1	8920	41	10	4	5	13	6						
ԵՐԵՎԱՆԻ	32	6552	51415	9885	13087	23022	23022	1720	309	2029	1 ճրթ 49	4	18480	84	17	14	1	18	14						
ԹԻՓԼԻՉԻ	10	2906	17754	2250	2548	4798	4593	457	161	618	1 ճրթ 12	2	4310	24	6	4	—	5	5						
ՇԱՄԱԽԻ	3	603	3500	950	795	1745	1335	117	29	146	3	—	1140	6	1	2	—	2	1						
ԲԱՅՈՒ	64	12992	91829	18815	21402	40267	40407	3107	783	3890	86	7	32850	155	34	24	6	38	26						
	1	—	—	3405	—	3405	4338	—	53	53	—	7 ճրթ 10	1000	4	1	—	—	1	—						
	65	12992	91829	22220	21402	43672	44745	3107	836	3943	86	17	33850	159	35	24	6	39	26						

աւելի տշակերտներով: Դրանով ուսուցչի գործը շատ դժւարանում է: Այդ դժուարութիւնը մեծանում է նրանով, որ ամեն մի ուսուցչին ընկնում է 2—3 բաժանմունք, այն էլ յաճախ խիստ անհամապատասխան սովորողների հասակով ու պատրաստականութեամբ: Գիւղական ուսուցչի գործը ծանրացնող ամենախոշոր պատճառը՝ դա դպրոցների մութը, խոնաւ, նեղւածք ուցուրտ շինութիւններն են, շատերը գուրկ պատուհանների ապակիներից, տախտակէ յատակից ու առաստաղից, կամ կարասիքից և դա ոչ միայն վարձու և ձրի ուսումնարանական շինութիւններում, այլ և սեպհական, այսինքն— որևէ բարերարի կամ հասարակութեան կառուցած ու հոգաբարձութեան խնամքին յանձնված ուսումնարաններում:

— էլ ի՞նչ մնաց, իրաւամբ կ'ստի ամեն մէկը:

— Տանջանք, կը պատասխանի գիւղական ուսուցիչը:

Եւ իրաւ. կայ դպրոց՝ կանգնած գոմի գլխին, — հոտը մէջը. կայ դպրոց — մի մեծ սրահ, 2—2¹/₂ արշին բարձրութեամբ, պատուհանի տեղ մի ծակ միայն, մէջը 64 տշակերտ, մի ուսուցչի յանձնված, ուսումնարան կայ, յատակը այնքան փոշի, որ կարծես աւաղի մէջ լինի նստած. ուսումնարան կայ՝ մեղրեսաների նման՝ ուր կըկզած սաքերի վրայ են գրում... Վերջապէս՝ ուսումնարաններ — գուրկ տարրական գրադարաններից, դասական պիտոյքներից ու երբեմն նոյն իսկ ձեռնարկներից . . . Այդպիսի պայմաններում թերևս գերբնական հակումներ և ընդունակութիւններ պիտի ունենայ մարդ-ուսուցիչը, որ կարողանայ գործ շինի: Բայց ցաւելով պէտք է ասենք և այն, որ որտեղ արտաքին պայմանները բաւականաչափ նպաստաւոր են, այնտեղ էլ առաջ են գալիս ներքին խոչնդոտներ, անհամերաշխութիւն, երկպառակութիւն, տրգիտութիւն և այլն և այլն, ուստի և — անբաւար ուսումնարան:

Էլի՛, մտածելով, որ լաւ է «անբաւարար» ուսումնարան լինի, քան ոչինչ չը լինի, — հիմնելով սփոփեցուցիչ բացառիկ յառաջադիմող դպրոցների փորձի վրայ, — կրթական Բաժինը յուսադրում է իրեն, որ այդ բոլորը անցողական է և ցանկալին հասանելի, միայն թէ աջակիցներ ունենայ գործողը:

Այդպիսի սպասելիքներով՝ տեղեկագրներում մի առ մի յիշված նպաստողների օժանդակութեամբ կրթական Բաժինս իր 64 դպրոցում սովորեցնում է 3820 տղայ-աղջիկ, որոնցից — Ղարաբաղի թեմում՝ 813 ա. և 284 աղջ., որ անում է 1000 բնակչին 57 աշ., Երևանի

Թեմում՝ 1720 տ. և 309 աղջ., 1000-ին 37,5 աշ., Թիֆլիզի թեմ. — 457 տ. 161 աղջ. կամ 1000-ին 34,8 աշ., և Շամախու թեմում 117 տղ. 29 աղջ. իսկ 1000-ին 41,7 աշ.: Բոլոր 4 թեմում—3107 տ. 783 աղջ. կամ 1000 բնակչին 42,3 աշ.: Ընդունելով որ աշակերտական հասակի աղայ-աղջկերք կազմում են բնակչութեան 10⁰/0-ը, կընշանակէ որ—կրթական Բիւրօն բոլոր 4 թեմերում, իր գործունէութեան վայրերում, ժողովրդական կրթութեանը նպաստում է 42,3⁰/0 չափով, միջին թւով, հասցնելով, մասնաւորապէս, այդ օգնութիւնը Շուշուայ թեմում—57⁰/0-ի: Այս օգնութիւնը Բիւրօյին նստում է 19065 ո. որ կազմում է 40407 ո. ընդհանուր ծախսի 47,2⁰/0-ը: Ամեն մի աշակերտի վրայ ծախսւում է 10 ո. 15 կ., որի 4 ո. 80 կոպ. տալիս է Սեկցիան: Մինչդեռ ամեն մի ուսումնարանի վրայ այդ ծախսից ընկնում է, միջին թւով 298 (մօտ 300) ուրբի: Զանազան թեմերում այդ օգնութիւնը փոփոխութեան է ենթարկւում այսպէս.

Թ Ե Մ	Ո Ռ Ի Բ Լ Ի				0/0/0
	Ուսումն. ծախսը		Սովորողների ծախսը		Կրթ. բաժնի մասն. չափը
	Ընդհանուր	Սեկց. բաժին.	Ընդհանուր	Սեկց. բաժին.	
Ղարաբաղի . . .	584	301,6	10,11	5,22	51,6
Երևանի	719,5	316,7	11,34	5,00	44,1
Թիֆլիզի	495,3	225,0	8,01	3,64	45,44
Շամախու	445	316,6	9,14	6,5	71,16
Միջինը՝ 4 թեմ.	631,4	298,0	10,15	4,80	47,2

Բացի այդ անմիջական ծախսերից կրթական բաժինը հաշուարում ունի՝ 3050 ո. վարչական ծախսեր, որ եթէ վերածենք ուսումնարանների և սովորողների թւին, կ'իմանանք, որ Սեկցիան լրացուցիչ ծախս է անում ամեն մի ուսումնարանի վրայ 47 ո. 65 կ. իսկ ամեն մի աշակ. վրայ 75 կ., ուստի և կրթ. բաժնի մասնակցութեան չափը կը փոխւի այսպէս. Ղարաբաղի թեմում 55,2⁰/0, Երևանի թեմում 50,07⁰/0, Թիֆլիզի թեմում 50,11⁰/0, և Շամախու

թեմում 73,3⁰/₀, միջինը—50,91⁰/₀,64 ուսումնարանի և 3890 աշակերտ-աշակերտուհու վերաբերմամբ:

Կրթական Սեկցիան իւր գործունէութեան մէջ սրոշ չափով ճնշված է զգում իրեն այն հանգամանքով, որ նրա ստացած մասնաւոր գումարները անւանական գումարներ են, յատկացրված անպատճառ այսինչ-այնինչ գիւղերում դպրոց բանալու համար: Այդպիսի պարագաներում Սեկցիան ազատ չի համարել իրեն այդ գումարների մի մասը գործադրել վարչական ծախսերի վրայ, դպրոցական շինութիւնների բարելաւելու վրայ գրադարաններ իրագրնական առարկաներ ու դպրոցական պիտոյքներ ձեռք բերելու վրայ: Հաշւետարում արված 3050 ռ. վարչական ծախսի դիմաց Սեկցիան ստացել է միմիայն 644 ռ. 21 կ.—(անդամավճար 266 ռ. 75 կոպ. Միութեան Բիւրօյի կասսան մտած անորոշ գումարների 10⁰/₀—285 ռ. 40 կ. և տուփերից 92 ռ. 06 կ.), ուստի և 2405 ռ. 79 կ. մնում է իբրև դեֆիցիտ: Բացի այդ հանգամանքից գումարների անւանական լինելը երբեմն պատճառ է լինում և նպատակայարմար փոփոխութիւնների առաջը կանգ առնելուն: Որև է տեղ դպրոցի հոգաբարձութեան և գիւղի հասարակութեան դէպի ուսումնարանը ունեցած վերաբերման նկատմամբ նպատակայարմար է լինում ուրիշ կերպ անօրինել դպրոցի վիճակը,—մինչդեռ վերոյիշեալ պատճառով այդ անել, կրնչանակէ մի դպրոց փակել իսպառ: Այդ տեսակէտից բացառութիւն են կազմում մի քանի դպրոցների նպաստներ և գլխաւորապէս Պետ. Եկ. Խորհրդի խոշոր նպաստը (8000 ռ.) որը անւանական է ո՛չ թէ գիւղերի, այլ շրջանների վերաբերմամբ, այն էլ ո՛չ նեղ մտքով: Մի հանգամանք, որ աւելի արդիւնաւէտ է դարձնում կրթ. Բաժնի գործունէութիւնը: Այդ հանգամանքից օգտուելով Սեկցիան Պետ. Եկ. Խորհրդի նպաստներով պահւող դպրոցների համար նոյն նպաստներից յատկացրել է 25-ական ռ. ամեն մի դպրոցի համար՝ իրազննական առարկաներ և գրադարաններ ձեռք բերելու նպատակով: Կրթական բաժինը եկել է այն եզրակացութեան, որ անհրաժեշտ է ամեն մի գիւղի ուսումնարանի համար տւած գումարներից բաժին հանել թէ վարչական ծախսերի և թէ գրադարաններ ու իրազննական առարկաներ ձեռք բերելու համար:

Վերևը մեր դպրոցները «անբաւարար» անւանելով, այդ բառը չակերտներում դրինք, որով ուզում էինք անբաւարար ասել քննադատական տեսակէտից, բարւոք ու կենսունակ ուսումնարանների

հետ համեմատելով մեր դպրոցները: Ուսումնարանը մի բարդ հիմնարկութիւն է, որ կախած է վերև յիշված մի շարք գործօններից — հասարակութիւնից (ծնողք), հոգաբարձութիւնից (անմիջական կառավարիչ), ուսուցչից (ղեկավար), բարերարից (նիւթականը հոգացողից) և նոյն իսկ անշունչ առարկաներից — շինութիւն, կահկարասիք, դասական պիտոյքներ, (իբրև անհրաժեշտ, նպաստող պայմաններ): Սրանցից իւրաքանչիւրի ազդեցութիւնը ճակատագրական հետևանք ունի դպրոցի կեանքի համար, որովհետև ամեն միևնի պակասութիւնը, բաց մեծի մասին, սուր կերպարանք է կրում: Հայկական միջնորդում բացի այդ պակասութիւններից տեղի ունեն և խոչնդոտ եղող ուրիշ յատակ հանգամանքներ, իրաւակարգի անորոշութիւն և աջակիցների բացակայութիւն նոյն իսկ այնտեղ, ուր սպասելի է, որ պիտի գրկաբաց ընդունեն և ծայրահեղ արագութեամբ նպաստեն կրթական Բաժնին: Զարմանալի չէ, միթէ, որ էրթախին, Երնջակ, Զահուկ (Պետ. Հայ. Եկ. Սորհ. նպաստներով) և Քիլվար (ինժ. Տէր-Յովհաննիսեանի միջոցներով) գիւղերի դպրոցները մնացել են չբացւած շնորհիւ տեղական հոգևոր վարչութեան անփութութեան, որին կրթական Բիւրօն քանիցս դիմել էր աջակցելու, և մնացել առանց հարկաւոր պատասխանի. հոգաբարձութեան ընտրութեան, դպրոցական շինութեան և այլ հարցերի վերաբերմամբ:

Հոգևոր վարչութիւնից յետոյ ամենամեծ աջակիցը պիտի լինի գիւղադական դպրոցի հոգաբարձութիւնը: Հոգաբարձութիւնը մեծ դեր ունենալով հանդերձ՝ կարող է շատ մեծ օգուտ կամ շատ մեծ վնաս տալ դպրոցին: Տարաբաղդարբար այդ հոգաբարձութիւնները մեծ մասամբ բաղկացած են տեղական վաշխառուներից, անհոգ և դպրոցներով չը հետքըբըւող մարդկանցից, որոնք գիւղում դիրք ու համարում ձեռք բերելու և ուրիշ նիւրին շահագործելու նպատակով են միայն գրադվում հասարակական հարցերով: Այդպիսիների հոգը չէ թէ ուսումնարանը վատաւող է, թէ նա պատուհան ու դուռը չ'ունի, թէ նա անյատակ է և առաստաղ չ'ունի, թէ նա մութն է ու խոնաւ, որ հասարակութիւնը ո՛չ թողակ է տալիս ո՛չ նպաստ դպրոցի համար. դրանց ինչ հոգն է թէ կրթական Բաժնիւր հեռւից-հեռու շրջիկ է ուղարկում, ստուգում, թերութիւնները պարզում, դպրոցի և ուսուցչի խէրն ու շաւը որոշում. . . Սեկցիայիս թղթերը կստանան, ու մինչ տար-

ւայ վերջը կը պահեն և չեն էլ պատասխանի—դպրոցը կ'այ թէ
չկայ: Մինչդեռ որքան շատ բան կ'անէր լաւ հոգաբարձութիւնը...

Մեծ աջակցութիւն կարող էր ցոյց տալ և ուսուցչական «Մի-
ութիւնը» եթէ նա իրագործէր վերև յիշված ուսուցչաց ցուցակը,
և առաջարկէր հայ դպրոցների համար իր բարոյական պատասխանա-
տութեամբ: Եզրակացնելով խօսքը՝ կրթական Բաթինը իր յոյսը
դնում է վաղւայ վրայ,—դեռ երկար շարունակելով իր բռնած ճա-
նապարհը, ապաւինելով իրեն կենդանութիւն տւող բարերաներին, լաւ
ուսուցիչներին ու բացառիկ աջակիցներին, ասելով—պարտ է ա-
նել այն ինչ որ կարող ենք, եթէ չըկրնանք անել այն, ինչ որ
ցանկալի էր: Միննոյն ժամակ նա իր սեպուհ պարտքն է համարում
խորին և զգացած շնորհակալութիւն յայտնելու: Տեղեկագրում
յիշված բոլոր հիմնարկութիւններին, ընկերութիւններին ու անհատ-
ներին, որոնք հնար են տալիս կրթական Սեկցիային թէև աղօտ,
բայց և այնպէս լուսոյ կանթեղներ պահելու մեր յուսակտուր,
կիսապահով ժողովրդի մէջ:

Նախագահ Բիրոյի՝ Գ. Կոստանեանց

Փոխ-Նախագահներ՝ { Ա. Տէր-Գրիգորեանց
Յ. Ստեփանեանց

Գանձապահ՝ Ա. Տէրտէրեանց

Անդամներ՝ { տիկ. Ս. Աղամեանց
տիկ. Պ. Տիգրանեանց
օր. Ն. Սաֆարեանց
Ա. Առաքելեանց
Զ. Զանբազեանց

Գործավար՝ Տ. Սարգսեանց

Տ Ե Ղ Ե Կ Ա Պ Ի Ր

Բագուայ Հայոց Կուլտուրական Միութեան Կրթական Սեկցիայի Կանանց արհեստագիտական դպրոցի 1908 - 1909 թ.

Կուլտուրական Միութեան Կրթական բաժնի Կանանց արհեստագիտական դպրոցը հիմնուել է 1906 թ. բաժնի Բիւրօյի նախաձեռնութեամբ և ջանքերով:

Այս 1908—1909 թ. ուսումնական տարեշրջանում նա բոլորեց իւր գոյութեան երրորդ տարին:

Դպրոցի ղեկը յանձնած է Բիւրօյի նախագահ պ. Գ. Յ. Կոստանեանին, գանձապահ պ. Ա. Տէր-տէրեանին և անդամներ տ. Ս. Մ. Աղամեանին և օր. Ն. Ն. Սափարեանին: Վերջիններս կանանց խմբի հետ կազմում են դպրոցի անմիջական վարչութիւնը, նախագահ տ. Ա. Աղամեան, փոխ-նախագահ օր. Ն. Սափարեան, գանձապահ տ. Ա. Այվազեան, քարտուղար տ. Ա. Տէր-Գրիգորեան:

Վարչութեան անդամներն են տ. տ. Հրաչեա, Ս Արզումանեան, Ա. Ասլիբէկեան, Հ. Ալիբէկեան, Հ. Բէկզադեան, Գ. Կրասիլնիկեան, Գ. Պոպովեան, Մ. Սահակեան, Պ. Տիգրանեան, Պ. Թումանեան, Ե. Տէր Միքայէլեան, Ն. Շահնազարեան, Գ. Ճգնաւորեան, օր. օր. Ե. Բէկլարեան, Փ. Գրիգորեան, Ե. Գլանցեան, Թ. Միրզաբէկեան, Ե. Պօղոսեան և Հ. Սարգսեան:

Վարչութիւնը շաբաթական մի անգամ ունեցել է իր հերթական նիստը, իսկ ուսումնական տարուայ ընթացքում ընդամենը 22 նիստ:

Տարուայ սկզբի հերթական ժողովներից մէկում, վարչութիւնը որոշեց գրաւոր յայտնել իւր շնորհակալութիւնը տ. Սոփիա Պետրոսեան-Արզումանեանին, որը դպրոցի հիմնուելու օրից վնեւով Բիւրօյի անգամ, միևնոյն ժամանակ և դպրոցի վարչութեան նախագահ, երկու տարի անխոնջ աշխատել և կառավարել է դպրոցը:

Դպրոցի արհեստագիտական բաժնի մանրամասն ծրագիրը և

վարչական խնդիրները մշակումը, վարչութիւնը յանձնել է իր միջից ընտրած մի մասնաժողովի, որի անդամներն են տ. տ. Ս. Աղամեան, Հ. Բէկդադեան, Մ. Սահակեան, Պ. Տիգրանեան օր. օր. Ն. Սափարեան, Մ. Յովսէփեան, Ե. Գլանցեան և Փ. Գրիգորեան:

Այս մասնաժողովը իր աշխատանքները դեռ լիովին վերջացրած չէ, նա շարունակում է ծրագրային մասը մշակել և առ ժամանակ հետևեալ սրոշումներն է կայացրել: Նկարչութիւնը անցնել լայն ծաւալով, զանազան ընտիր ձևերի և նկարների ընդօրինակումով հետզհետէ զարգացնել աշակերտուհիների ճաշակը: Այդ առարկայի ծրագիրը լիովին մշակուած է և արդէն գործադրվում է դպրոցում:

Կար ու ձևի բաժնի ուսումը շարունակել մինչև հինգ տարի որովհետև այս բաժնում պահանջվում է գործի հմտութիւն, փորձառութիւն և նուրբ ճաշակ, որը կարելի է դպրոցում ձեռք բերել երկար և սխառեմատիք աշխատանքից յետոյ:

Սպիտակեղէնի, հարթակարի և շքեղ ձեռագործի ուսումը տևելու է երեք տարի, իբրև աւելի դիւրամբունելի աշխատանքներ: Գուլպաների դասընթացը մի տարի:

Սեպտեմբերից ուսման վարձը պակսեցնել՝ փոխանակ 50 ռ.՝ նշանակել սպիտակեղէնի ու հարթակարի և կար ու ձևի բաժիններում 30 ական բուբլի, իսկ գուլպաների բաժնում թողնել նոյնը 15 բուբլի:

Զրիաթոշակ ընդունել աշակերտուհիների ընդհանուր թուի 25⁰/0 ոչ աւել. իսկ չքաւորների համար աշխատել գտնել ստիպենդեա և այս ձևով ստեղծել թոշակի վճարման միակերպութիւն:

Այս 1908—1909 ուսումնական տարուայ ընթացքում սրոշումն էր վերցնել 50 ռ. թոշակադրամ առաջի երկու բաժանմունքների համար, բայց աշակերտուհիներից շատերը վճարում էին իրենց միջոցների համեմատ: Վարչութեան անդամները ստուգում էին աշակերտուհիների նիւթական դրութիւնը՝ ծանօթանալով անձամբ նրանց ընտանեկան և տնտեսական պայմանների հետ: Եւ իբրև հետևանք այդ ծանօթութեան լիովին թոշակ վճարել են 53 աշակերտուհուց 13 հոգի, կիսով չափ 17 հոգի և ձրիավարժ 23 հոգի (մօտաւորապէս 44⁰/0): Նշանակելով ուսման վարձը 30 բուբլի փոխանակ 50 բուբլ. դպրոցի բիւջէի մէջ խոշոր փոփոխութիւն չի մտնի, բայց դպրոցը մատչելի կը դառնայ ժողովրդի չքաւոր դասակարգի համար, որին նա պէտք է ծառայէ:

Արհեստագիտական դպրոցը ունի չորս բաժին:

I Կար ու ձևի

II Սպիտակեղէնի, հարթակարի, շքեղ ձեռագործի

III Գուլպաների

IV Ընդհանուր կրթական բաժին:

Իւրաքանչիւր բաժին գտնվում է վարչութեան անդամների հսկողութեան տակ: Սոցա պարտականութիւններն են՝ հսկել որ աշխատանքները ճշտապահութեամբ կատարուին, գնել նիւթերը, հաշուեցուցանները ստուգել և ընդհանրապէս հոգալ իւր բաժնի զարգացման ու յառաջադիմութեան համար: Կար ու ձևի բաժնի վերահսկողներն են տ. Ս. Ադամեան և տ. Գ. Կրասիլնիկեան:

Սպիտակեղէնի և հարթակարի տ. Պ. Թումանեան և օր. Պօղոսեան: Գուլպաների բաժնի տ. տ. Ա. Ասլիբէկեան, Գ. Ճգնաւորեան, և Ա. Տէր-Գրիգորեան: Շքեղ ձեռագործ սովորում են կար ու ձև և հարթակար սովորող աշակերտուհիները, ղեկավարութեամբ օր. օր. Ն. Սափարեանի և Ե. Բէկլարեանի:

Դպրոցի վարչութեան մնացած անդամները յանձն են առել դպրոցի հերթապահութիւնը, որոնց պարտականութիւնն է հսկել աշակերտուհիների նիստ ու կացին և դպրոցական կեանքի կանոնաւոր ընթացքին:

Ամեն մի բաժին իւր վարժուհին ունի, որոնց հրաւիրում է վարչութիւնը Բիւրօյի համաձայնութեամբ: Սպիտակեղէնի բաժնի համար հրաւիրուած է օր. Մ. Յովսէփեանը, որ աւարտել է Տփլիսի Հայուհեաց կանանց արհեստագիտական դպրոցը մի տարի ժամանակով 480 ռ. ոտճիկով:

Մինչև 1909 թ. Մարտի 1-ը օրիորդը կատարում էր վերակացուհու պաշտօն ուսարի և ստանում էր դպրոցին կից սենեակ, լուսաւորութիւն և վառելիք:

Կար ու ձևի վարժուհի տ. Ե. Ակունեան ամսական 40 ռ. ոտճիկով և ամառային ամիսների վարձը:

Գուլպաների բաժնի համար անցեալ տարուայ վարժուհի օր. Բարանովան ամսական 30 ռուբ., նաև ամառային ամիսների վարձը:

Բացի ոտճիկից վարժուհիները ստանում են նաև 15% վաճառուած իրերի արժէքից և պատուէրներից:

Մարտի մէկից դպրոցի տնտեսական մասը վարում է տ. Ե. Բունեաթեանը ամսական 30 ռ. վճարով:

Ընդհանրապէս վարժուհիներ ընտրելիս վարչութիւնը մեծ գրծ-
ուարութիւններ ի հանդիպում, որովհետեւ դեռ մեզանում շատ քիչ
են նոյն իսկ չկան արհեստագիտական լրիւ կրթութիւն ստացած
կանայք:

Անցեալ տարի դպրոցն ունէր և գլխարկների բաժին, սակայն
վարչութիւնը ի նկատի ունենալով նախկին բնակարանի անյարմա-
րութիւնները, ծախքի շատութիւնը և հմուտ վարժուհու պակասու-
թիւնը, հարկ համարեց ժամանակաւորապէս փակել այդ բաժինը,
թողնելով ապագային նրա վերաբացման հարցը:

Ընդհանուր կրթական բաժնում, աշակերտուհիները սովորում են
հայերէն, ռուսերէն, թուաբանութիւն և նկարչութիւն քաղաքային
տարրական ուսումնարանների ծրագրով: Աշակերտուհիների մեծ
մասը անգրագէտ են, այս հանգամանքը բնականաբար շատ է խան-
գարում աշակերտուհուն իւրացնել արհեստներին վերաբերեալ նըր-
բութիւնները:

Աշակերտուհիների մտաւոր տարբեր պատրաստականութեան
շնորհիւ, յիշեալ առարկաներն անցնելու համար, հարկ եղաւ նրանց
բաժանել երեք կարգի և ամեն մի բաժանմունքի հետ պարապում
են առանձին: Նիւթականի սղութեան պատճառով, դասատուութիւնը
տեղի է ունեցել ձրի. սիրայօժար յանձն են առել պարապելու հայ-
ոց լեզուից ա. Պ. Տիգրանեան, ռուսերէնից օր. Ե. Գլանցեան,
թուաբանութիւնից օր. Փ. Գրիգորեան, նկարչութիւնից ա. ա. Հ.
Ալիբէկեան և Մ. Սահակեան:

Դպրոցին կից գրադարան հիմնելու համար ստացւած է պ. Գ.
Առստանեանից նուէր 30 ըուբ. որով գնուած են միմիայն ընթեր-
ցանութեան համար գրքեր: Կարևոր է գրադարանը ճոխացնել ժուր-
նալներով, ալբոմներով, ձեռագործի վերաբերեալ գրքերով, նկար-
ներով և այլն: Անկասկած շատ ընտանիքներում անգործադրելի
մնում են արհեստագիտութեան վերաբերեալ գրականական նիւթեր,
ցանկալի է, որ այդ նիւթերը ուղարկուէին դպրոցին նուէր. աւելորդ
օրինակները կը նուիրուին աղքատ աշակերտուհիներին:

Աշակերտուհիներին սիրով յանձն են առել ձրիաբար բժշկել
պ. պ. բժ. Յ. Մամիկոնեան, Ք. Օհանեան, Վ. Տէր-Գրիգորեան, Վ.
Արծրունի և ատամնաբոյժ օր. Ն. Բէլուբէկեան: Վիտուշինսկու դե-
ղատունը բաց է թողնում աշակերտուհիներին դեղերը 40% զիջումով:

Դպրոցական պարապմունքները տևում են առաւօտեան ժամը

8¹/₂-ից մինչև 3-ը: Մեծ դասամիջոցը տևում է կէս ժամ, իսկ միւսները 5-ական րոպէ:

Այսպիսով աշակերտուհիները պարապում են օրական 6 ժամ շաբաթական 36 ժամ, որից 28 ժամ յատկացրուած է արհեստագիտական և 8 ժամ հանրակրթական առարկաներին:

Վեց ժամուայ աշխատանքը ծանր չի կարելի համարել աշակերտուհիների համար, այն պատճառով, որ աշակերտուհիները ընդունվում են 13 տարեկան հասակից ոչ պակաս և ձեռագործն ինքըն ըստ ինքեան չի պահանջում մաքի լարումն:

Դպրոցը հնարաւորութիւն չունենալով աշակերտուհիներին տաք նախաճաշ տալու, մեծ դասամիջոցին տալիս է նրանց թէյ, բաժակը մի կոպէկով: Ներկայ 1908—1909 թ. դպրոցական տարում պարապմունքները սկսուել են սեպտեմբերի 17-ից և տևել մինչև Յունիսի 15-ը: Վարչութիւնը անհրաժեշտ է համարել երկու շաբաթ յետաձգել արձակուրդը, որովհետև մինչև Յունիսի կէսը դպրոցում պատուէրներ են լինում: Ներկայ դպրոցական տարուայ ընթացքում սովորող 53 աշակերտուհիներից կար ու ձևի բաժնում եղել են 7 հոգի, սպիտակեղէնի ու հարթակարի 33 հոգի, և գուլպաների բաժնում 13 հոգի:

Տարուայ ընթացքում դպրոցից հեռացել են 11 աշակերտուհի, որոնցից

հիւանդութեան պատճառով	3,
քաղաքից հեռացել են	2,
ամուսնացել են	4,
և անյայտ պատճառներով	2:

Աշակերտուհիները ըստ իրենց ծնողների կոչման և պարապմունքների, բաժանվում են այսպէս՝

Քահանայի որդիք	2
Արհեստաւորների	18
Բանւորների	14
Վաճառականների	8
Գրասենեակի ծառայողի	6
Մանրավաճառի	2
Երկրագործի	2
և Պետական ծառայողի	1

Այս թուից երևում է, որ արհեստավորների և բանավորների միջից ընդամենը 32 աշակերտուհի—կազմում են դպրոցի բոլոր աշակերտուհիների 60%:

Աշակերտուհիներից 4-ը բոլորովին որբ են, իսկ մնացած 49 ունին ծնողներ:

Ուսումնական տարուայ ընթացքում աշակերտուհիները կատարել են հետևեալ պատուէրները՝

Կար ու ձևի բաժնում	47 կտոր	արժ.	111	ր.	60	կ.,
Սպիտակ և հարթ. "	185	"	172	"	65	"
Գուլպաների	172	"	75	"	05	"
Շքեղ ձեռագործի	50	"	43	"	75	"

Բոլոր պատուէրներից դպրոցը մուտք է ունեցել ընդամենը 403 ր. 05 կ.: Պատուէրներից ստացուած չնչին գումարը բացատրվում է նորանով, որ 1) դպրոցը դեռ չունի բաւարարաչափ պատրաստուած աշակերտուհիներ, որոնց մեծ մասը առաջին տարուայ աշակերտուհիներն են, չի կարելի պատասխանատու պատուէրներ յանձնել, 2) կար ու ձևի նախկին վարժուհին ձեռնհաս չէր, ուստի վարչութիւնը անյարմար գտաւ պատուէրներ ընդունել: 3) Աշակերտուհիները պատուէրներ պատրաստելու համար պարապում են օրական միայն 3 ժամ: 4) Նախկին տարիների աշակերտուհիներից ոմանք ամուսնանալով հեռացան դպրոցից:

Աշակերտուհիները փոքր հմտութիւն ձեռք բերելուց յետոյ, կատարում են մասնաւոր պատուէրներ դպրոցում ստանալով վճարի 15%: իսկ տանը պատուէր վերցնողները ստանում են արժէքի կէսը:

Որովհետեւ արհեստագիտական դպրոցը իր ծաւալով չի կարող բաւարարութիւն տալ տեղի ունեցող պահանջին, ուստի որոշուած է նոյն դպրոցին կից բաց անել երեկոյեան դասընթաց միայն ձև սովորեցնելու նպատակով, որի համար արդէն վարչութիւնը ստացել է պատշաճաւոր իշխանութիւնից թոյլտուութիւն:

Դպրոցի ել և մտից մանրամասն հաշիւը տպագրվում է կրթական բաժնի ընդհանուր հաշիւների հետ. այս տեղ մենք միայն առաջ կը բերենք այս երեք տարուայ ընթացքում եղած մուտքի և ծախքի գումարների անփոփոմը.

Տարի	Մուտք	Ծախք	Դէֆիցիտ
1906—1907	347	423—71	76—71
1907—1908	3412—68	3754—08	341—40
1908—1909	3405—25	4338—88	933—63
Ընդամենը	7164—93	8516—67	1351—74

Այս թուերը ցոյց են տալիս, որ ծախսը տարէց տարի աւելա
նում է մինչդեռ մուտքը մնում է անփոփոխ, իսկ դէֆիցիտը խո-
շոր չափերի է հասնում 1908—1909 թ. նա հասել է 933 ռ. 63 կ.
Իսկ ընդհանուր քանակը երեք տարուայ ընթացքում 1351 ռ. 74 կ.

Ծախսի մեծ օժ-ը կազմում է դպրոցի բնակարանի վարձը 350ժ
(1500 ռ.) այսպիսի քաղաքում ինչպիսին է Բագուն վայելուչ բնա-
կարան ունեցող դպրոցի համար խոշոր ծախս է պահանջւում:

Ուսուցչուհիների ուճիկը կազմում է ծախսի 310ժ 1360 ռ.
1908—1909 թ. ամեն մի աշակերտուհու վրայ ծախս է եղել 85 ռ.

Դպրոցի մուտքի գլխաւոր աղբիւրները դեռ լինելու են կող-
մնակի եկամուտներ և գլխաւորապէս նուէրները, մինչև որ դպրոցը
այնքան լաւ կը կազմակերպուի որ կարողանայ ինքն իւր ծախքերը
հոգալ: Դպրոցի թէ նախկին և թէ ներկայ տարուայ վարչութիւն-
ները, ամեն ջանք գործ են դրել ներկայացումներ տալով, գատկա-
կան տօներին ծաղկազարդին բազար սարքելով հոգալ լիովին դրպ-
րոցի ծախսերը, սակայն լիովին չէ յաջողուել դեռ այդ անել:

Այս տարուայ գատկական բազարին հասարակութեան անդամ-
ներից մի քանիսը տեսնելով աշակերտուհիների յառաջադիմութիւնը
և վարչութեան դպրոցի բարւոքման համար գործ դրած ջանքերը,
խոշոր նւիրատուութիւններ արին: Մեծապատիւ պարոնայք Արշակ
Ղուկասեան և Միքայէլ Ալիբէկեան նուիրել են 500 ալան ըուբլի,
Բաղդասար Յակոբեան 100 ըուբլի, Աստուածատուր Դօլուխանեան
50 ռ. և Արտաշէս Թումանեան 25 ռ. որոնց վարչութիւնը պարտք
է համարում յայանել իւր խորին շնորհակալութիւնը:

Այսպիսի մի խոշոր արդիւնաբերական վայրում, որտեղ հա-
րրատութեան հետ ապրում է անծայր աղքատութիւնը, որտեղ տա-
րէց տարի գործազուրկների թիւը աւելանում է, և մուրացկանների
ու թշառների շարքերը խտանում, այսպիսի մի վայրում՝ բնական
մի պահանջ է, որ կինը օգնէ իւր ամուսնուն, և քոյրը եղբօրը.
միայն ժողովրդի աղքատ դասակարգի ձեռքը գրապիտութեան հետ
ի միասին արհեստ տալով, կարելի է փրկել նորան մուրացկանու-
թիւնից:

Կանանց արհեստագիտական դպրոցի գոյութեան խնդիրը ան-
հրաժեշտ պահանջ է Բագուայ հայ ժողովրդի համար, նորա նպա-
տակը կենսալի և կարևոր. նա ուզում է սովորեցնել հայ կնոջը
գրապիտութիւն և արհեստ. նա ուզում է տալ նրան ինքնուրոյն

աշխատանքի և ապրուստի միջոց. նա նպատակ ունի պատրաստել վարժուհիներ գաւառական քաղաքների և գիւղաքաղաքների դպրոցների համար, ուստի և նա արժան է մեր հասարակութեան ջերմ ուշադրութեան:

Մենք լիայոյս ենք, որ վերոյիշեալ պարոնների բարի օրինակը արձագանք կտայ Բագուարնակ տասնեակ հարուստների և հարիւրաւոր ինտելիգենտների շրջանում և ամեն մարդ իւր կարողութեան չափ թէ նիւթապէս և թէ բարոյապէս կօզնէ վարչութեանը, որ պէսզի երեք տարի շարունակ դժուարութիւններով պահած դպրոցը ազատուի դէֆիցիտից և նորա գոյութեան հարցը դրուի աւելի հաստատուն հիմքերի վրայ.

Ի վերջոյ վարչութիւնը յայանում է իւր խորին շնորհակալութիւնը, այն բոլոր անձնաւորութիւններին՝ որոնք անմիջական կամ կողմնակի կերպով նպաստել են դպրոցի բարգաւաճման:

Նախագահ Բիւրօյի՝ Գ. Կոստանեանց:

Նախագահ վարչութեան՝ Տ. Ա. Աղամեանց:

Փոխ-նախագահ՝ օր. Ն. Սափարեան

Քարտուղար՝ Տ. Ա. Տէր-Գրիգորեանց:

Ա. ՏԵՂԵԿԱԳԻՐ

Բ. Հ. Կ. Մ. Կրթական բաժնից օժանդակ-
ւող ու նրա նախաձեռնութեամբ (*) բացւած
դպրոցների ցուցակը եւ ուսուցիչների ու
հոգաբարձուների կազմը:

Անուն եւ ազգանուն ուսուցիչները	Ուսուցիչները ո՞րտեղ են սովորել եւ աւարտել (կրթական ցէնզ)	Ուսուցիչների ոտնիկը	Հոգաբարձուների անուն եւ ազգանունները	Տեղական քահանաների անուն եւ ազգանունները
Բիւրդէլ Թառուսեան	Աւարտած Երևանի թեմական դպր.	480	Յովսէփ Առուշանեան Յարութիւն Բալասանեան Ծատուր Գասպարեան Սուլէյման Պետրոսեան	Յակոբ քահ. Տէրաէրեանց
Աւետիս Գասպարեան Լևոն Զարափեանց	Աւարտած Շուշու թեմ. դպր. Աւարտած Բագ. տեխնի.ք. դպր.	450 450	Մելիքսէթ Մեծլումեան Հայկ Մուսայելեանց Զումշուգ Ասրիեանց Ասլան Միրզա Օսէփեան	Եղիազար քահ. Տէրաէրեանց
Բենեամին Փարուանեանց	Սովորած Ճեմարանում, ունի ուսուցչական ցէնզ	380	Աղաջան Զաւամեանց Բալաս Ասրիեանց Գրիգոր Բաղդադիլի Բարա Աբրահամեանց Գարեգին քահ. Տ. Կարապետ. Թաւադ Պողոսբէգեանց	
Արամ Վերդեան	Աւարտած Ներսիսեան դպրոցի VI դասար.	450	Միրզաջան Յովսէփեան Սարգիս Անանեանց	Իշխան քահ. Տ. Յովհաննիսեանց
Տեղեմաք Տէր-Մովսէսեան	Աւարտած Ներսիսեան դպրոցի VI դասար.	520	Գրիգոր Թոմասեանց Բաղդասար Մելքումեանց Նիկողայոս Աթանեանց Յակոբ Դաւթեան	Աղէքսանդր ք. Տ. Դանիէլեանց

№	№	Թեմ, շրջան, գաւառ, որանդ գտնվում է գպրոցը	Գիւղի անունը, որանդ գտնվում է գպրոցը	Որո՞նք են հարեւան գիւղերը	Քանի՞ բաժանուններ ունի գպրոցը	Աշակերտա եւ աշակերտուհի- ների թիւը				Ընդհանուր թիւը	
						Տեղական		Հարեւան գիւղեր			
						Տղայ	Աղջիկ	Տղայ	Աղջիկ		
6	ՆՍՏՆԱԿԱՆ ՎԵՌԱԿԱՆ ՎԵՐՈՒՄ		Դոնաւլարդ	Խաչմաղ, Նրնգի, Շօշի	2	28	33	—	—	61	
7			Ծովաանդ *)	Հերհեր, Խերխան	1	27	14	6	1	48	
8			Սոս *)	Քարահունջ, Քէրթ	1	29	—	—	—	29	
9			Քարին ասկ *)	Շուշի քաղաք	2	31	9	—	—	40	
10		ՆՍՏՆԱԿԱՆ ՎԵՌԱԿԱՆ ՎԵՐՈՒՄ		Թաղլար	Աղոխ, Գրախտիկ, Դումի, Տող	4	119	10	—	—	129
11				Աղոխ *)	Թաղլար, Թաղթիկ	1	35	6	—	—	41

Անուն եւ ազգանուն ուսուցիչներին	Ուսուցիչները ո՞րտեղ են սովորել եւ աւարտել (կրթական ցէնդ)	Ուսուցիչների ուճակը	Հոգաբարձուների անուն եւ ազգանունները	Տեղական քահանաների անուն եւ ազգանունները
Տիկ. Շուշանիկ Տէր-Մարտիրոսեան	Աւարտած Շուշուոյ Մարինսկիյ դպր.	400	Ասրի Բալասանեանց Միքայէլ Աղաջանեանց Աղաջան Մկրտումեանց	Պետրոս քահ. Տ.-Մանուէլեան Իսրայէլ քահ. Տ.-Մանուէլեան Սարգիս քահ. Տ.-Մելիքսէթեան
Մատթէոս Դարբնեանց	Աւարտած Ներսիսեան դպրոցը	420	Պաւլի Մ. Փաշաեանց Սարուխան Բաղդասարեան	Յովս. ք. Տէր-Թովմասեանց
Նսայի Քամալեանց	Աւարտած Երևանի թեմական դպրոցը	480	Աղարէկ Քոչարեանց Առաքել Ահարոնեանց Սարուխան Դադայեան	Յակոբ քահ. Բաղդասարեանց
Թաղէոս Աղադեանց	Աւարտած Ներսիսեան դպր. VII մանկավարժ. բաժանմ.	460	Սարգիս Տէր-Յակոբեան Արշակ Ղարախանեանց	
Համադասպ Երիցեան Գրիգոր Զաքարեանց	Աւարտած Երևանի թեմակ. դպր. Սովորած բէալական դպր. ունի ցէնդ	400 350	Յովհ. Ղազարեանց Կարապետ Տէր-Դանիէլեանց Աւագ Գալստեան Մելիքսէթ Տ.-Բաղդասարեանց	Մելիքս. ք. Տ.-Բաղդասարեան Առաքել ք. Տ.-Գասպարեանց
Արսէն Ղուկասեանց	Աւարտած Շուշուոյ թեմական դպր.	400	Աւետիք քահ. Տ.-Բաղդասարեանց Աւագ ջան Ասրիեանց Սարգիս ջան Ասրիեանց Համբարձի Ամիրեան Միրզաջան Դաւթեան	

№	Թեմ, շրջան, գաւառ, որանի գանձում է գավրոցը	Գիւղի անունը, որանի գանձում է գավրոցը	Որո՞նք են հարեւան գիւղերը	Քանի՞ բաժանմունք ունի գավրոցը	Աշակերտ եւ աշակերտուհի- ների թիւը				Ընդամենը թիւը
					Տեղական		Հարեւան գիւղեր		
					Տղայ	Աղջիկ	Տղայ	Աղջիկ	
12	ՆՈՃԱԶ ԿԻՊՃԿԼ	Զրակոյս *)	Մամեղաձոր, Հողեր, Ծակարի	3	40	13	18	5	76
13		Շաղախ *)	Հաղրուխ	1	42	4	—	—	46
14		Խաչենի շրջան	Նորագիւղ *)	Սարգարիչէն	2	24	15	1	—
15	Ճ Ն Ս Պ Թ Գ Ս Դ Կ Լ Կ Չ Ն Ս Ն	Մսխրաթաղ	Մարդակերտ, Մեծ-չէն	2	43	20	—	—	63
16		Մատաղէս *)	Տօնաչէն, Դաստակերտ	2	20	19	13	2	54
